Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԵՎԳ. ՊԱՎԼՈՎԻ

ՄՐՑԱՆԱԿ
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՐԱՅԱՆԱՁԻԳԻՆ

Կոմյերիտական ներկայացում
1 գործողությամբ

ՏԵՐԵՎԱՆ 1930 թ.

ՅԵՎԳ. ՊԱՎԼՈՎԻ

891.71
Պ

ՄՐՑԱՆԱԿ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՐԱՑԱՆԱՁԻԳԻՆ

Կոմյերիտական ներկայացում
1 գործողությամբ

Հ 41152

ՀԱՍՊ ԳԻՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

Հայպոլիգրաֆի տպ. պատ. № 159

Գրառեպ. № 2761 (բ) Տիրաժ 2000

Գործողությունը կատարվում է բանվորական ակումբի ամառային սպորտ-հրապարակում: Հրցուճաձիգ խմբակի անկյուն: Տիր: Շրջափակ: Նատրան: Նշաններ: Ցուցանակ-պլակատներ— «Հրաձգային տիր», «Զբաղմունքները···-ից մինչև···», «Ցուցակ», «Ցուրաքանչյուր կոմյերիտական պետք է կարողանա լավ կրակել» և այլն:

ԽԱՂՈՒՄ ԵՆ՝

ԱՆՆԻԿ
ՄԱՆՆԻԿ
ՖԻՆԱ
ՍԻՄԱ
ՋԻՆԱ
ՆԻՆԱ
} կոմյերիտական-խմբակցիներ·

ՏԻԳՐԱՆ·—Հրացանաձիգ խմբակի քարտուղար·

ՌԱՐՍԱՄՅԱՆ·
ԶԱՔԵԼ
} քաղքենի զույգ

ԿԱՐԱՊԵՏ·—սպորտ հրապարակի սպասավոր

Կոմյերիտականներ, փիզկուլտուրնիկներ— ցանկացած քանակությամբ:

Վարագույրը բացվելու ժամանակ Աննիկն ու Մանիկը չոքած՝ հրացաններն ուղղել են դեպի հանդիսականները։ Կրակոց։ Յերկուսն էլ գլորվում են։

ԱՆՆԻԿ.— Ա՛յ։ Անուշ մնաս։ Մաննի՞կ։

ՄԱՆՆԻԿ.— Հը՞։

ԱՆՆԻԿ.— Իսկակա՞ն կրակոց էր։

ՄԱՆՆԻԿ.— Իսկական։ Վո՞նց ես։

ԱՆՆԻԿ.— Վոչինչ։ Կողքերս անվնաս են, գլուխս էլ տեղումն է։ Միայն սիրտս տեղահան յեղավ։ Իսկ դու— կենդանի՞ յես։

ՄԱՆՆԻԿ.— Սալջարդ եմ յեղել— գլուխս ապյուսին դիպավ...

ԱՆՆԻԿ.—(Բարձրացնում է հրացանը) *նեղացա՞ր, Մաննիկ։*

ՄԱՆՆԻԿ.— Ի հարկե։ Ավելի վիրավորականն այն է, որ դու մատ կրակող ես։ Սովորիր գոնե խմացողներից։ Թնկուզ ինձանից։ Յես առաջնակարգ հրացանագիր եմ։ Հրացանն ինձ համա լո՞նչ է։ Անենք կարգադրում են՝ «ձախ նշանին... սկսի՛ր»։ Տրա՛ք։ Ընկավ։ Հիմա դադար պատրաստենք և հոգեհանգիստը չմոռանանք։ Ահա։ Կամ, ասենք, նշան է։ Դու նախ և առաջ հրացանի նշանառության հատիկին նայիր, ապա հնիկը քաշիր։

ԱՆՆԻԿ.— Շնիկը՞։

ՄԱՆՆԻԿ.— Այո։ Սովորիր մատնադեռից։ Հրացանը

վերցնում ես։ Դեմ արա ուսիդ։ Ճնիկը նշանին բռնիր և հատիկը քաշիր...

ԱՆՆԻԿ.— Մի՞թե։

ՄԱՆՆԻԿ.— Այո։ Որովա լոպունդն և...

ԱՆՆԻԿ.— ...Ճնիկն ուսին և հատիկը քաշի՞ր։

ՄԱՆՆԻԿ.— Վոչ։ «Ցուրաքանչյուր կոմյերիտական պետք և հրացան բռնել իմանա»։ Հասկա։

ԱՆՆԻԿ.— Հասկա՞։

ՄԱՆՆԻԿ.— Այ տեսնում ես— բռնել եմ։ «Ցուրաքանչյուր կոմյերիտական պետք և կարողանա լավ կրակել»։ (Հրահանը սեղմում է։ Կրակոց)։ Ո՛յ... (Ցերկուսն էլ այս ու այն կողմ են թռչում)։

ԱՆՆԻԿ.— (Քիչ լռելուց հետո) Մաննի՛կ...

ՄԱՆՆԻԿ.— Հը՞։

ԱՆՆԻԿ.— Իսկ ամեն մի կոմյերիտական կրակոցից հետո պետք և գլխիվայր թռչի՞։

ՄԱՆՆԻԿ.—Պարտադիր չի։

ԱՆՆԻԿ.— Ցես էլ կարծում եմ։

Ներս է մտնում ապասավոր կարապետը

ԿԱՐԱՊԵՏ.— Ե՛յ, աքլորներ, ձեզ ով և իրավունք տրվել եսպես վաղ գնդակ արձակել յերկնքի վրա։

ՄԱՆՆԻԿ.—Ա՛, Կարապետ։ Բարի որ, բարի աջողում։

ԱՆՆԻԿ.— Մեր հարգանքը։

ՄԱՆՆԻԿ.— Աննիկ, փախչենք։ Կարապետը հիմի կսկսի քարոզ կարդալ լսելու մասին։

ԿԱՐԱՊԵՏ.— Դու ինձ մի չփոթեցնի։ Ասա հլա, տեսնեմ, եղ հրացանը վո՞րտեղից ես վերցրել։ Գիտես վոր հրապարակը բացվում և յոթին։

ՄԱՆՆԻԿ.—Անտեր ընկած եր, մենք էլ վերցրինք։

ԿԱՐԱՊԵՏ.—Դա ինձ չի վերաբերում։ Ցես իրրև ծա-

ում և ապրելային իրերը պահող, պաշտոնական հայտարարում եմ— վոչ մի հրացան: Ցիրը բացվում է յոթին, հրապարակը չորսին, մյուս խաղերը— պանդան. ժամանակ...

ԱՆՆԻԿ.— Բյուրոկրատացել ես, Կարապետ: Մի՞ջավայրը քեզ փչացրել է:

ՄԱՆՆԻԿ.— Թեթև հեծելազոր պիտի բաց թողնել քեզ վրա:

ԿԱՐԱՊԵՏ.— Հեծելազորն ետուղ վոչ մի գործ չունի... Դու. կարգ ու կանոնն իմացիր: Անողատակ յերկինքը մի ծակծկիր... Գնդակը քամուն ես տալի, գլուխդ գետնին...

ԱՆՆԻԿ.— Ի՞նչ գիտես. գուցե մենք էլ մեր կրակելու մեթոդն ունենք:

ԿԱՐԱՊԵՏ.— Գլուխդ խնայիր— մեթո՞դ:

ԱՆՆԻԿ.— Դե լավ, Կարապետ, էլ մի բղավի, հարկավոր չի:

ՄԱՆՆԻԿ.— Տղաներին բան չասես:

ԱՆՆԻԿ.— Մենք գիտամամբ— աշխատանքից յեկանք վարժվելու, վոր առաջադիմենք:

ՄԱՆՆԻԿ.— Այո:

ԿԱՐԱՊԵՏ.— Ըմբիշներ եք էլի: Լավ', հեռացեք (Ադջկերբը փախչում են): Հրացան գցողներիս տեսնեք: Դու կարգին սովորիր և անտեղի մի կրակիր: Էլ բան ու գործ չունեմ: Սրան հեռուի, նը բան մի թողնի: Ամեն տեսակ պրինպարատներն անվնաս պահի: Վոր մաքուր լինի—մեկ, ամեն բան իր տեղը լինի— յերկու: Վոր կարգ ու կանոն լինի— յերեք, և ըմբիշներին հեռուից չորս: Ըմբիշներին հո թիվ չկա: Դրանց պատ-

ճառով և— կարգը խանգարվում է: Որերով, դոքծնները թոգած, վարժություն են անում— մեկ: Մեկը մյուսին վնասում են— յերկու: Ռազմամթերք են փչանում—յերրեք: Մի խոսքով անկարգություն են տարածում: Անողատակ կրակում են— հինգ և... առհասարակ— վե՛ց:

ՏԻԳՐԱՆ.—(ներս մտնելով) Կարապետ, մերոնք յեկե՞լ են:

ԿԱՐԱՊԵՏ.— Ա՜խ, դու յես սուր քիթ: Յերկուսը յեկան... Այսինքն, չեն յեկել: Խնդրեցին հասնեմ, վոր յեկել են:

ՏԻԳՐԱՆ.— Ի՞նչ ես աչ ու ձախ խոսում: Մատյանը սուր և տիրը բաց արա: Զրաղմունքները շուտով կլինեն...

ԿԱՐԱՊԵՏ.— Վաղ է: Ցոթը չկա:

ՏԻԳՐԱՆ.— Այսոր չարաթ է: Աշխատանքը վերջացել է: Մերոնք ակումբումն են:

ԿԱՐԱՊԵՏ.—Կարգ չկա: Ցես, իրրև ծառա և ապրուստին իրերի պահապան, պաշտոնապես հայտարարում եմ...

ՏԻԳՐԱՆ.— Իսկ յես, իրրև հրացանաձիգ խմբակի քարտուղար, կտրականապես պահանջում եմ...

ԿԱՐԱՊԵՏ.—Եհ, դո՛ւ յել: Աքլոր—աքլոր է անում: Ըմբիշ (գնում է:)

Յերաժշտություն: Թոչում է բասկետբոլյան գրնդակը: Բրիջով և գրնգուն ուրախությամբ գնդակի յետևից ներս են վազում կոմյերիտականները: Բոլորը միատեսակ ՄԱՅԿԱՆԵՐ հագած: Բասկետբոլ թե՛ բեռում և թե՛ դահլիճում: Յերաժշտությունն անցնում է մարշի: Ակրոբատիկա: Ֆիզկուլտուրայի պար:

ԲՈԼՈՐԸ.— (յերգում են):

ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ № 1.

Մեկ-յերկու, հավասար,
Մեկ-յերկու, արագ,
Մեկ-յերկու, համաբաձակ!
Մեկ-յերկու, արագ!
Մենք յերգում ենք յերգը նոր արևի,
Նոր կյանքի ու ֆիզկուլտուրայի...
Թափով, թափով
Ու թռիչքով,
Սմեն մի մկանը մեր
Աշխույժն և մեր.
Ու հավասար զարկում և
Մեր սիրտը խփում
Ֆիզկուլտ մարշի ռիթմում:
Անգոր առանձին—զորավոր ենք շղթայում,
Հզոր ենք—պատանիների արշավում.
Ցերկաթե արևի հնոցում
Կռում են ժամանակը յերկաթ:
Մեկ-յերկու, համաբաձակ... և այլն:

ՍԻՄԱ.—Կանգնեցե՛ք: Շունչ առեք, տղերք, աղջկերք. խաղը վերջացած և առժամանակ:

ԲՈԼՈՐԸ.—Ֆիզկուլտ-ուռա՛: Ֆիզկուլտ-ուռա՛ (քրքֆիչ):

ՍԻՄԱ.—Տիգրան, հրաձգարանը բա՞ց է:

ՏԻԳՐԱՆ.—Բանում ենք: Ցանկացողները թող դան տիր—կոլեկտիվ ցուցակ... հերթով ցուցակագրվեցեք: Ռազմագեռը դեռ չի՞ յեկել:

ՄԱՆՆԻԿ.—Հրահանգիչը՞: Դեռ չի յերևում: Տիգրան,

թույլ տուր անկարգության համար կրակենք առաստաղի վրա։

ՏԻԳՐԱՆ.—Խորամանկ ես։ Ցուցակագրվիր։

ՄԱՆՆԻԿ.—Իրրև ծանոթ։ Ցուցակը, գա—ստորին բյուրոկրատիզմ է։ Տիգրան, ծաղիկ ջան։

ՏԻԳՐԱՆ.—Ձեռք քաշի, Մաննիկ։ Կխփեմ—կգլորվես...

(բոկսերի հարված է տալիս)։

ՍԻՄՍ.—Բռամբ, Տիգրան։ Խփիր գրանց։

ՄԱՆՆԻԿ.—Ու՛հ, Տիգրան։ Ձեզ բոլորիդ...

ԱՆՆԻԿ.—Ապարատչիկներիդ...

ՄԱՆՆԻԿ.—Սա... (բացով խփում է գլուխին)։

ԱՆՆԻԿ.—Այդպես։

ՏԻԳՐԱՆ.—Իսկ ձեզ յերկուսիդ...

ՍԻՄՍ.—Այն...

Քաշքշոց։ Մաննիկը գլորվում է։

ԱՆՆԻԿ.—Ընկերներ, ինչ կուզեք ասեք, մենք յերկուսս էլ տարակուսանքի մեջ ենք։ Մաննիկի ամենաաչքի ընկնող տեղը—ալլեգորիկ ծակ է բացվել։

ՄԱՆՆԻԿ.—Իսկապես։

ՁԻՆԱ.—Աղջիկերք, տղերք, առաջարկում եմ—նախ տիր, հետո մրցակցություն բասկետբոլով, ապա...

ԱՆՆԻԿ.—Ելի՞ տիր...

ՁԻՆԱ.—Մի ընդհատի։ Ապա կերթանք կուլտ-արշավի զեկուցման։ Հետո...

ՍԻՄՍ.—Հերի՛ք է, Զինա։ Առանց այն էլ մաքսիմում ծրագիր ես առաջարկում։

ՍԻՄՍ.—Աղջիկերք—կոնկրետ առաջարկ։

ԲՈԼՈՐՔ.—Ասա՛։

ՍԻՄՍ.—Կոնկուրս տանք յուվենալ հրացանաձիգի համար։

ՖԻՆԱ.—Ճիշտ է:

ՏԻԳՐԱՆ.—Ճիշտ է, Սիմա: Լավագույն հրացանաձիգին—մրցանակ: Հետո մյուս խմբակին կկանչենք մրցակցության:

ՍԻՄԱ.—Լա՜վ է: Ինքներս էլ մեզ կհավաքենք:

ԱՆՆԻԿ.—Սիմա, այդ դու յես մտածե՞լ:

ՍԻՄԱ.—Յես ինքս:

ԱՆՆԻԿ.—Խելացի առաջարկ է: Քեզ նման չի:

ՏԻԳՐԱՆ.—Այդպես, ուրեմն, հայտարարվում է նախնական ատուգիչ կոնկուրս Լենինի անվան ակումբի սպորտխմբակի լավագույն հրացանաձիգի համար: Սկսենք: Պետք է պատրաստվել:

Մրցակցության պատրաստվելու ընդհանուր աշխատանքի Պատից պլակատ են կախում: Նշաններ են դնում: Հրապարակը մաքրում են, հրացանները դիտում: Այս բոլորը դրվում է յերգի ռիթմի մեջ և կախված է ֆիզկուլտ-շարժումների հետ:

ԲՈԼՇԻՐԸ.—(արագ)

Որը բաժանվում է ոլակների,
զոլանջում է ապատ յերգը
վոլգոցնելում կոլմնակի.
և ուրախ գրույցը կոմյերիտների
հոսում է վոլգոցնելում գյուղերի:
Յերգիր,
խոսիր,
պարիր շուրջանակի,
ու պատրաստվիր մրցանակի!...

ԱՂՋԿԵՐՔԸ.—Քամի՛, քամի՛ բքաբեր,
փչիր, յերգիր, խեղկատակ,

և ապրեն ու վռչին մեր
սրրի՛ր, քշի՛ր ծառի տակ։

ՏՂԵՐՔԸ.—Ցնրգեցեք դուք աշխուժով,
ծուլությունը թաղենք մեր ուժով.
պայքար—պայքարի յետևից
յերգ—յերգի յետևից...
Ցնրգիր,
խոսիր,
պարիր շուրջանակի,
ու պատրաստվիր մրցանակի...

Պատից կախում են կոնկուրսի պլակատը։ Նշանները դրված են, հրացանները պատրաստված։ Բոլորը—նույն յերգը բերաններին—հետզհետե հեռանում են։ Բեմը դատարկ է։ Ներս են ընկնում Բաբասյանն ու Զաբելը։ Պաթեթիկ զրույց։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Ներողություն, ու՞ր և ի՞նչ բանի եք քշում ինձ։

ԶԱԲԵԼ.—Ախ, գնա՛նք, գնա՛նք։ Ցեվ, խնդրեմ, առանց հարցեր տալու։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Առանց հարցերի—կարելի յե... Այ (դեմ է առնում հրացաններին).
Զգո՛ւյշ—գնդակներ...

ԶԱԲԵԼ.—Ցես գնդակներից չեմ վախենում...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Անվախ կի՛ն...(կարդում է) «Հրաձգարան տեր»... Զիգի, ապաշում եմ, եվ վոչ մի քայլ չեմ անի... Ցես նկատում եմ—այնտեղից ատոմական վառոդ և սպառնում... Մենք պատերազմին դեմ ենք... Մենք չեկոք ենք...

ԶԱԲԵԼ.—Բաբասյան, վախկոտ մի լինի... Աբի յետևից...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Չի-դի... Ապաշում եմ. վոչ մի քայլ չեմ անի... Ցե՛ռ գնանք: Ցեռ չեմ կարող...

ՉԱՐԵԼ.—Բարսամյան, դու վախկոտ ես:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Չիդի, գա հնարավոր է, բայց ա-նուղղելի...

ՉԱՐԵԼ.—Բարսամյան, յես սկսում եմ արհամար-հել ձեզ...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Չիդի, մթան թե այդ չե... Դուք անվախ կին եք, ձեր սիրուն յես յեկա կոմյերի-տականների սպորտ-հրապարակը... Ձեր շնար-հիվ յես յերկու դարմանալի հարված ստացա (ցույց է տալիս) այստեղ—ֆուտբոլի գնդակով, իսկ այստեղ—ծնկով, նրա համար, վոր խաղի մեջ մտա... Գնանք... այստեղից...

ՉԱՐԵԼ.—Ա՛խ, չե՛, չե՛: Այդ բոլորն այնպես հետաքրքրքիր է, անսովոր: Հատուկ-քաղաքական...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Չի-դի... Դու հերոսուհի Ժաննա-ը Արկն ես: Ինչպես չեք վախենում: Այստեղ մեր չորս բոլորը գնդակներ են... Կոմյերիտական-ներ... Փանիուշներ... Ցեռ, արինակ...

ՉԱՐԵԼ.—(կոնկուրսի պլակատի մոտ) Բարսամյա՛ն...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Հը՞:

ՉԱՐԵԼ.—Ցեկեք այստեղ:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Չիդի, չեմ կարող... Այդտեղից վա-ռոդի հոտ է գալիս:

ՉԱՐԵԼ.—Ձեզ ասում են՝ յեկե՛ք:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Ո՛, կին: Գալիս եմ... Հիմա կգամ...

ՉԱՐԵԼ.—Կարդացեք...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—«Մրցա-նակ լա-վա-գույն հրաց-նաձիգին»...

ՉԱԲԵԼ.—Հասկանալի՞ յե։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Համարյա թե... Այսինքն—վոչ։ Այսինքն—հենց այս։ Կոնկուրսը—հասկանալի յե։ Մեզանում շատ կոնկուրսներ կան—լավագույն կոսոգ մեքենայի համար, լավագույն վարիչի համար, լավագույն մեքենագրուհու, մաքուր՝ ատանց մեխի և ատանց կոճակի հայի համար...

ՉԱԲԵԼ.—Ահա՛։ Ցեսս էլ ուզում եմ, վոր դուք այպիսական հրացանաձիգ լինեք։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Ներողություն։ Զլսեցի։ Ի՞նչ լինեմ։

ՉԱԲԵԼ.—Ալպիական հրացանաձիգ...

ԲԱՐՍ.—Ալպիակա՞ն... Հրացանաձիգ... Դա ի՞նչ և նշանակում։

ՉԱԲԵԼ.—Ցեսս ուզում եմ, վոր դուք ալպիական հրացանաձիգ լինեք—ահա բոլորը... Դուք այսոր պիտի կրակեք և մրցանակը տանեք...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Ցե՞ս։ Զիպի!.. Դա անկարելի յե։ Դեռ տասյոթ թվին, յերբ մեր սենյակն իսկական գնդակ մտավ, ամամաբը գլորեց և մյուս կողմից դուրս յեկավ, մինչև այժմ մարմնովս սարսուռ և անցնում... Չե՛, չե՛... Ավելի լավ և, կինս դրնանք, Զիպի։

ՉԱԲԵԼ.—Բարսամյան, դուք ինձ սիրու՞մ եք։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—(հառաչելով) Դժբախտաբար—այո՛

ՉԱԲԵԼ.—Դուք ասպե՞տ եք թե սաեղի քաղաքացի։ Կրակելու՞ եք։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Անկարելի յե...

ՉԱԲԵԼ.—Վախկոտ! Ամեն ինչ վերջացած և։ Մնա՛ք բարով, Բարսամյան։

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Զարմ՞լ... մի՛ դնա... Սիրաս կտրտ-կտրտ է լինում շոկոլադի պես...

ՉԱՔԵԼ.—Յես գոթ չունեմ ձեր շոկոլադի սրտի հետ: Մնաք բարով:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Չկի, իսկ յեթե մի ամիս հետո՞ լինի: (հեկեկում է): Գոնե պատրաստվեյի: Կատակ դը-ռեյի...

ՉԱՔԵԼ.—Մնաք բարով, Բարսամյան... (հեկեկում է):

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Դե, լավ... Համաձայն եմ արարական հրացանաձիգ դառնալ: Յես արդեն կորած մարդ եմ:

ՉԱՔԵԼ.—Սիրելի... Ապեռ: Բարսամյան—դու հե-բրա ես...

Ներս է վազում Աննիկը

ԱՆՆԻԿ.—Սա ի՞նչ տեսարան է... Ե՛յ, տղաներ...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Ներողություն...

ՉԱՔԵԼ.—Ընկերներ—սրան յուցակի մեջ մացրեք: Նա ուզում է արաբական հրացանաձիգ դառնալ...

ԱՆՆԻԿ.—Ի՞նչ:

ՉԱՔԵԼ.—Նա ուզում է կրակել և մրցանակ ստանալ... Կարելի՞ յե:

ԱՆՆԻԿ.—Նրա՞ն: Թո՛ղ կրակի... Ապդանունն ի՞նչ-պես է:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Իմը՞: Բարսամյան:

ԱՆՆԻԿ.— Բար-սամյան (գրում է): Պատրաստ է: Վե-ցերորդ հերթը ձերն է... Շուտով կսկսենք: Զուչանալ...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—վո՛չ, վո՛չ: Մենք միայն լիմոնաջուր... Չի-դի գնանք բուֆետ, յես ինչ-վոր տաքություն զգացի... Առայժմ, ընկեր...

ԱՆՆԻԿ.— Ասայիմ, Բաղդասարյան:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Բարսամյան...

ԱՆՆԻԿ.—Ը՞հը: Բարսեղյան:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.— Բարսամյան:

ԱՆՆԻԿ.—Յեռս էլ ասում եմ էլի—Բարսանյան:

Զույգը հեռանում է: Անիկը քրքջում է: Ներս են վազում կոմյերիտականները:

ԱՆՆԻԿ.—Տղերք, աղջկերք, զարմացած եմ ուզղակի...

ՋԻՆԱ.—Ի՞նչ է պատահել:

Անիկը ծիծաղում է, ցուցակը ցույց տալիս:

ՅԻՆԱ.—«Բարսամյան»...Լավ ազգանուն է..Սա ո՞վ է:

ԱՆՆԻԿ.—(ծիծաղում է) Ալպիական հրացանաձիգ:

ՋԻՆԱ.—Արի ու հասկացիր գրան...

ՏԻԳՐԱՆ.—Ուշադրություն, ընկերներ: Բոլորն այստե՞ղ են: Ահա թե ինչ: Ժամը ութն է: Ուստի մեր կոնկուրսը—լավագույն հրացանաձգի կոնկուրսը համարում եմ բացված... Այստեղ, ի հարկե, շատ բան ասելու կարիք չկա: Ամեն տեսակ դիվանագիտություն և ֆրազաբանություն մեզ չի սազում: Ռազմական սերունդն աճում է: Կոմյերիտականները վոչ միայն աշխատել են սովորում, այլ և լավ կրակել, նշանին խփել... Կոմյերիտականները վոչ միայն կուլտարշավի յեն գնում, նրանք իրենց լավագույն ուժերը տալիս են Կարմիր բանակին և նավատորմին... Արևստ ավելով, հեռավոր ջրերով թռչուն են մեր կոմյերիտական նավատորները...

Լույսը կիսահանգչում է: Կողքերից—կանաչ և կարմիր լույս, ինչպես նավում: Ամեն ինչ լուռ է: Ցերաժշտություն:

ԲՈԼՈՐԸ.—Ղեկավար,
Պատրաստ, դեկը վարել!
Ազդանշանով— լուսավոր նավի կողերը:
Էրդին և արին մոռեցնում է հողը,
Վերջին արյունում վեճը...
Բարձրացրեք խարիսխները
Քաշեցեք պարանները
Ամրացրեք զոբերը:
Բանվոր,
Գյուղացի,
Բանակային,
Նավատոր,
Աշխատող կաց,
Պահիր իշխանությունը...

Լիակատար լույս

ՍԻՄՍ.—Լավագույն հրացանաձիգի կոնկուրսը բացված է (սուլիչ): Առաջին գույդը հրացանաձիգներ Փինան ու Նիկոլը: Կարապետ—հացանները ելեր: Մրցողներ—յեկե՛ք այստեղ...Նշաններն ասուղիր, Աննիկ: Ժյուրին ամբողջ հասարակությունն է: Պատրաստ ենք: Սկսենք:

Կանգնում են. տեղները փոխում: Ցերգի ոիթմի մեջ Ֆինան և ուրիշ մի մատնակից կրակում են: Կրակոցները լսվում են—ոչ խլացնող:

ԲՈԼՈՐԸ.—(յերգում են) Կարպն իմացիր
Դու բանի...
Սիրիր անվախ
Դու նշանին,
Սկսիր աջից
Ու նշանիր Զեմբելբլենին:

Թեկուզ կանգնած,
Թեկուզ չոքած
Նշանների մեջ
Կաեսնես Զեմբերլենին
Դու ատամները բաց...

ՍԻՄԱ.—Հայտարարում եմ ատուգում: Աննիկ—նշանները նայի՛ր:

ԱՆՆԻԿ.—Ահա (նշանի մոտ) հի՛-հի՛: Հինգ կրակոցից—մեկը մոռոմոթատես, մեկը—համարյա թե, մեկը հազիվ-հազ և յերկուսը, ներողություն—կապույտ յերկինք են թռել:

ՅԻՆԱ.—Սու՛տ ես ասում:

ԱՆՆԻԿ.—Հետապոտեք ինքներդ:

ՏԻԳՐԱՆ.—Արձանապրիր, Սիմա... Հետևյալ դուրը Վալիկ Ստեփանյան, Նինա Ադապյան: Կանգնեցեք տեղում: Սկսեցեք...

ՄԱՆՆԻԿ.—Նինան հրացանը թատի պես և բռնել: Կարծես նպատակ և նշանելու:

ՆԻՆԱ.—Տես, իմ նշանից սիրտդ չիատնի: (Նշան է բռնում: Լռություն: Կրակոց):

ԱՆՆԻԿ.—Ողի մեջ դնաց:

ՆԻՆԱ.—Հետո կաեսնենք (նշան է բռնում: Լռություն: Կրակոց):

ՄԱՆՆԻԿ.—Նինա, այդպիսով, Զեմբերլինի տեղ դու ընկերներին անատամ կթողնես: Իսկապես:

Վալիկն ու Նինան կրակում են:

ՆԻՆԱ.—Բոլորը: Ստուգեցեք:

ԱՆՆԻԿ.—(Նշանի մոտ) Ողի մեջ... Ո՛յ—ո՛ւ...Տեսա՛ր...

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ՆԻՆԱ.— Ի՞նչ ես գկրտում: Պարզ խոսիր:

ԱՆՆԻԿ.—Բոլորը:

ԲՈԼՈՐԸ.—Ի՞նչ բոլորը:

ՖԻՆԱ.—Կողքի՞ց ե անցել:

ՏԻԳՐԱՆ.—Վրիպե՞լ ե:

ՍԻՄԱ.—Ցերկի՞նք են թռել:

ԱՆՆԻԿ.—Բոլորը գիպել են Զեմբելենի լյարդին:

ՄԱՆՆԻԿ.—Այ քեզ, Նինա, ա՛յ կեցցես, Նինա. բոլոր գնասակնելդ նշանին ե գիպել:

ԲՈԼՈՐԸ.—Բռավո, Նինա: Բարձրացրեք, բարձրացրեք... Ցերամշություն, տուշ!

Բոլորը «տուշ» են յերգում և Նինային որորում: Ծիծաղ, բացականչություններ: «Բարձր, բարձր, ու բարձր»— ավիումարշից: Հետզհետե անցնում են պարի.

ՏԻԳՐԱՆ.—Իսկ այժմ կոնկուրսը շարունակվում ե: Հեսուսյալ դուդը— Աննիկն ու... Ի՞նչպես... Չի կարդացվում... Բարսամյան...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—(Ներս ե մտնում Զաքերլի հետ). Ցես... Զիպի... Մնաք բարով... Մինչև գերեզման սիրել եմ ձեզ—և յերբ գուք իմ աճյունը կտանեք գիակիպարան—հիշեցեք—հիշեցեք, վոր ձեր պատճառով ընկավ Բարսամյանը:

ԱՆՆԻԿ.—Բարդասարյան, ո՞ւր ես:

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Այստեղ եմ: Այստեղ: Զիպի, գուցե՞ կարիք չկա... Աֆրիկական հրացանաձիգ լինելու:

ԶԱՔԵԼ.—Բարսամյան— գուք ասպետ ես: Իսկ ասպետի խոսքը— գերեզման ե...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Այո, գերեզման... Դուք գերեզմանի մասին ճիշտ ես ասում:

ԱՆՆԻԿ.—Ընկեր Բաբսեղյան— այստեղ լեկեք: Ծանոթացեք, ընկերներ. թանկագին հյուր մեր ապարահրապարակում... Նույնպես կրակել է փափագում:

ԲԱԲՍԱՄՅԱՆ.—Ո՛չ, չե՛, չե՛...

ԶԱԲԵԼ.—Բաբսամյան, դու փափագո՛ւմ ես:

ԲԱԲՍԱՄՅԱՆ.—Այո, այո... Անպայման փափագում եմ:

ԱՆՆԻԿ.—Ահա ձեզ նոր ռևոլվեր հրացան: Միայն, նեբոզություն, դուք այն ծայրը չեք դեմ տվել ձեր ուսին: Ուզիզ հակառակը պիտի անեք... Այդպես:

ՍԻՄԱ.—Պատրաստ եք... Ուշադրություն...

Նշան են բռնում: Բաբսամյանի հրացանը դողդողում է:

ԶԱԲԵԼ.—Բաբսամյան, դուք հերոս եք... Կրակեցեք:

Կրակոց

ԲԱԲՍԱՄՅԱՆ.— (Հրացանը գցում է). Ոյ, սա ի՞մ կրակոցն էր:

ԱՆՆԻԿ.—Վոչ, իմն էր...

ԲԱԲՍԱՄՅԱՆ.— Ա՛խ, ձե՞րն էր: Նեբոզություն: (Վերցնում է հրացանը): Տեր, դու վոզոբմաս (կրակոց Բաբսամյանի յետևը կանգնած Զաբելի գլխարկը թռչում է: Բաբսամյանն ընկնում է). Ցեռ սպանվեցի...

ԶԱԲԵԼ.—Բաբսամյան... (նայում է գլխարկին) Սա ի՞նչ բան է:

ԲԱԲՍԱՄՅԱՆ.—Ծակվել է, Զիգի...

ԶԱԲԵԼ.—Սա ի՞նչ է նշանակում, Բաբսամյան:

ԲԱԲՍԱՄՅԱՆ.—Խորհրդային վատ վորակի ապրանք... Ցեռ միշտ ասել եմ...

ԶԱԲԵԼ.—Սո՛ւտ է: Այս դուք ծակեցիք գնդակով...

ԲԱՐՍԱՄՅԱՆ.—Ցեւ՞ես: Հերիք է... (Աչքերը խուզի գրկում է Մանիկին). Զիզի, հանգստացիր ինձ...

ՄԱՆՆԻԿ.—Քաղաքացի Բարսամյան, սխալ հասցե է վերցրել... Զեր գեղեցկուհին հրե՛... Իսկ այս—յես եմ...

Ընդհանուր քրքիջ: Բարսամյանն ու Զաբելը կորչում են բազմության մեջ: Անիկը կրակում է:

ՏԻԳՐԱՆ.—Սրա հետևանքն էլ պարզ է—վու՛չ:

ՍԻՄԱ.—Սուտկինք (նշանի մոտ). ոյ, Անիկ: Ոգի մեջ ես կրակել:

ԱՆՆԻԿ.— Հրմ: Նշանակում է չի բռնել: Ուրեմն մրցանակը տարել եմ, քանի որ թուղթը մաքուր է: Ափսո՛ս...

ԲՈԼՈՐԸ.—Մի տխրի, Անիկ... Զրպարտիր, վարժվիր:

ՅԻՆԱ.—Հետևյալ զույգը—Հանրապետության վաստակավոր հրացանաձիգներ—Տիգրան և Սիմա!

ՄԱՆՆԻԿ.—Ոհո՛: Ցերաժշտություն—ուշադրություն:

Տուշ: Բոլորը ծափահարում են: Տիգրանն ու Սիման հրացանները վերցնում են:

ՅԻՆԱ.—Սրանք կխփեն ամեն մի լորդի քթածակի:

Լռություն: Բոլորը հետևում են կրակոցներին:

ՏԻԳՐԱՆ.—Դու ինձ ճանաչու՞մ ես, Սիմա: (կրակում է):

ՍԻՄԱ.—Ճանաչում եմ, Տիգրան (կրակում է): Ի՞նչ է որ:

ՏԻԳՐԱՆ.—Ցեռ լա՞վ տղա յեմ թե չե, քո կարծիքով:

ՍԻՄԱ.—Իմ կարծիքով—վոչինչ: Քո կարծիքով ի՞նչպես:

ՏԻԳՐԱՆ.—Իմ կարծիքով էլ՝ լավ եմ (կրակում է): Դու էլ լավ աղջիկ ես: Ցեվ լավ էլ աշխատավոր: Գիտակից ես, հպարտ չես... Սիրալիր ես...

ՍԻՄԱ.—Դու այդ ինչու՞ համար ես ասում:

ՏԻԳՐԱՆ.—Ցե՞ս: (կրակում է) Ուզում էլի քեզ հետ խոսեմ, ժամանակ չեր լինում: Իսկ այստեղ միասին ենք: Ցեվ ահա (կրակում է)... Դուրս և դալիս յերկուսս լավ ենք...

ՍԻՄԱ.—Հը՞: (կրակում է):

ՏԻԳՐԱՆ.—Ցեվ վերջ:

ՍԻՄԱ.—Այդքանը՞:

ՏԻԳՐԱՆ.—Չե, մի բան էլ կա:

ՍԻՄԱ.—Ի՞նչ: Ասա՛:

ՏԻԳՐԱՆ.—Կարող եմ ասել: Գիտես ի՞նչ... Դա... Այսինքն... Այդպես ընդհանրապես: Հասկանալի՞ յե:

ՍԻՄԱ.—Սարսափելի հասկանալի յե... Գուցե՞ լրացնես-հանդամանքներն դեկուցես:

ՏԻԳՐԱՆ.—Էլ ի՞նչ: Գիտես էլի... Նու, ինչպես ասեմ... Ցես քեզ... Ցես դեպի քեզ, Սիմա... (կրակում է) Հասկանալի յե: Հարմար խոսք չեմ գտնում:

ՍԻՄԱ.—Հի-մա՛ր: Վազուց գիտեմ: Ցես ինքս էլ այդպես եմ դեպի քեզ...(կրակում է) Հասկանալի՞ յե:

ՏԻԳՐԱՆ.—Սիմա՛: Հանա՞ք ես անում: Ուռռա՛: (կրակում է ոդում):

ԱՆՆԻԿ.—Տղերք, աղջկերք, Տիգրանը խելքը թրցրել է:

ՏԻԳՐԱՆ.—Իսկապես թուցրել է:

ՖԻՆԱ.—Հերիք է գնդակներ փչացնես: Առանց այն էլ չափից ավելին ես կրակել:

ՄԱՆՆԻԿ.—Ինչ էք կարծում, ընկերներ, սրա գլխին ջուր ածենք թե բանտարկենք ինքնաքննադատական խորհրդակցությունների համար: Վոր դրատատանա: Հը՞:

ՏԻԳՐԱՆ.—Հարկավոր չէ: Արդեն զգաստացել եմ: Նշանները ստուգիր:

ՄԱՆՆԻԿ.—(նշանների մոտ) Ի՞նչ ստուգեմ: Պարզ է: Ութ անգամ կրակել ես—ութն էլ ուղիղ նշաններին: Բոլոր ութն էլ:

ՏԻԳՐԱՆ.—Ինձը:

ՄԱՆՆԻԿ.—Ինչպես ինձը: Իններորդը չկա: Ութեմն վրիպել է:

ՏԻԳՐԱՆ.—Ա՛խ, չէ՛: Ուղիղ նշանին: Ահա՛:

Գրկում է Մանիկին: Ընդհանուր զարմանք, ուրախություն, ծիծաղ.

ԱՆՆԻԿ.—Ե, ախբեր ջան, այս տեսակ կրակոցներից Զեմբերլենի վոչ մի տեղը վողջ չի մնա:

Ծիծաղ.

ՍԻՄԱ.—Դե, լավ: Կոնկուրսը շարունակում ենք. Հետևյալ զույգը... Մանիկ:

ՄԱՆՆԻԿ.—Ցեռ եմ:

ՍԻՄԱ.—Ցեվ Զինա Թոչունյան: Գնացեք կրակելու տեղը:

ԶԻՆԱ.—Ընկերներ...

ՏԻԳՐԱՆ.—Հետս կծվծվաս, Զինիկ: Հրացանը վերցրու, կրակիր...

Զինան ու Մանիկը վերցնում են հրացանները.

ՄԱՆՆԻԿ.—Ընկերներ, գուցե՞ կարիք չկա, վոր յես կրակեմ: Հը՞: Ցեռ ախր առանց կոնկուրսի հետևանքները գիտեմ:

ԱՆՆԻԿ.—Ներողություն կանես... Ամեն մի կոմերիտական պետք է լավ կրակել իմանա:

ՄԱՆՆԻԿ.—Դա ճիշտ է, Աննիկ, միայն... (Զինան կըրակում է): Ոյ՛, չէ, չեմ լսի... Դե դիպիր... Ահա ձեզ կրակոց... (կրակում է): Ահա և հետևանքը... (գլորվում է):

Ծիծաղ, սուլոց:

ԱՆՆԻԿ.—(Նշանի մոտ) Հինգից յերկուսը—մեկը թեք, մյուսը ուղիղ կողմ:

ՍԻՄՍ.—Ընկերներ... Կոնկուրսը վերջացավ:

ԱՆՆԻԿ.—Ահա, մրցանակը, մրցանակը: Հաստատության վարչությամբ, մրցանակներ: Մաննիկ, մրցանակները բերը: Ուշադրություն: Առաջին մրցանակը—լավ նշան բռնելու համար տրվում է Նինա Ագապյանին: Մրցանակը——ոքր տեսակի հրացան: (Ծափահարություն: Յերաժշտություն տուշ):

ՏԻԳՐԱՆ.—Ահա և առուգում կատարեցինք, ընկերներ: Սա լավ եր: Ամեն մի լավ կրակոց—հարվածում է մեր թշնամիների հուլյաերին:

Անշեղ լինենք ու խիստ
Ղեկը վարում է ուժեղ ձեռք
Լսու՞մ ես մեր յերթը հաղթ,
Լսո՞ւմ ես մարշը հեռվի...

ԲՈԼՈՐԸ.—առույգ և ուժեղ յերգում են «Յունգֆիրոնտի մարշը»:

Զարկեցեք թմբուկը ուժգին զարկով,
Կանչեցեք բոլորին ճակատը կռվի,
Բանակի հետ յերկաթե քայլով
Քայլում է պատանի բանակը արի:
Համառ, աննկուն ու հավատարիմ՝
Քայլում ենք շարք-շարքի յետևից,
Մենք Կոմինտերնի հզոր բանակի
Առաջավոր վաշտն ենք արի:
Տվե՛ք միայն կրակոտ հրաման—
Վոտքի կելնենք անթիվ շարքերով,
Ու աշխարհը համայն
Կթնդա մեր ուժգին յերգերով:

Կրկնվող յերգ.—Բայլեցե՛ք կարգով.

Բայլեցե՛ք շարքով,
Եյ՛, պահակ,
Դու արթուն յեղիր,
Ու քայլիր ուղիղ...
Ամուր և Խորհրդային
Յերկիրը մեր...
Նրան չի կարող
Վոչինչ խորտակել:—
Լսու՞մ ես մեր պատ–բանակի
Յերթը հպարտական...
Ամեն մի խրճիթ—բերդ և մեզ համար.
Ամեն մի դարձարան—ամուր խրամատ.
Ամեն մի սիրտ—լցված և Լենինով,
Ամեն մի կուրծք—կռվի թմբյունով...

Կրկնել.—Բայլեցե՛ք կարգով,
Բայլեցե՛ք շարքով:
Եյ՛, պահակ,
Դու արթուն յեղիր,
Ու քայլիր ուղիղ...
Ամուր և Խորհրդային
Յերկիրը մեր...
Նրան չի կարող
Վոչինչ խորտակել:—
Լսու՞մ ես մեր պատ–բանակի
Յերթը հպարտական...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՍԿԱԶԵՑԻՐ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038912